Կարգապահական գործ թիվ ԿԳ-16202

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունվարի 26-ի թիվ 30-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/22-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԱԳՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր թիվ 749) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

13.07.2016թ. և 04.08.2016թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ են ստացվել քաղաքացի Հակոբ Հայրապետյանի դիմումներն առ այն, որ քրեական գործով իր դստեր շահերը ներկայացնելու համար առանց ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու 2015թ. ապրիլին դիմել է փաստաբան Վահագն Մանուկյանին և վճարել է 3 000 (երեք հազար) ԱՄՆ դոլար:

2015թ. նոյեմբերին նախաքննական մարմինը դիմողի դստերը կանչել է քննչական բաժին, ով Վահագն Մանուկյանի հետ ներկայանալով, պարզել է, որ Վահագն Մանուկյանը նախկինում չի եղել տվյալ բաժնում, չի ուսումնասիրել քրեական գործի նյութերը: Դիմողը ստեղծված իրավիճակում պահանջել է փաստաբան Վ.Մանուկյանից հետ վերադարձնել իր վճարած գումարը: Վահագն Մանուկյանը 05.02.2016թ. ստորագրել է գումարը ստանալու վերաբերյալ ստացական, որը տվել է Հ.Հայրապետյանին սակայն բազմիցս խոստանալով, որ գումարը կվերադարձնի, այդպես էլ չի վերադարձրել:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

08.08.2016թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահի թիվ 365-Ա/ԿԳ-16202 որոշմամբ փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.5.5 և 3.8.5

ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ: Կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող փաստաբան Սամվել Միրզոյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

Կողմերը բացատրություններ չեն ներկայացրել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում, նախապատրաստող Ս.Միրզոյանը ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի.

<< Կարգապահական վարույթ նախապատրաստելիս գտնում եմ `

ա) <u>Փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու և հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու վերաբերյալ</u>

Կանոնագրքի *2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի *3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Դիմողը հայտնել է, որ Վահագն Մանուկյանին դիմել է, որպեսզի քրեական գործով ներկայացնի իր դստեր շահերը, սակայն գումարը վճարելուց 6 ամիս անց տեղեկացել է, որ որևէ գործողություն փաստաբանի կողմից չի կատարվել նա անգամ չի ծանոթացել քրեական գործի նյութերին և ծառայություն իր դստերը չի մատուցել:

Ներկայացված հիմքերով առերևույթ է, որ կարգապահական վարույթի ընթացքում ներկայացված փաստերի հաստատումը կարող է հակասել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով նախատեսված կանոններին:

բ) <u>Փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից Դիմողի հետ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքվել է թե ոչ , այնքանով , որ</u>

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ ***Գործն ընդունելուց հետո, եթե*** *այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտության կա:*

Դիմողի պնդմամբ փաստաբանը իր հետ չի կնքել իրավական օգնություն ցույց տալու մասին գրավոր պայմանագիր, ինչը պարտավոր էր կատարել առնվազն հանձնարարությունն ընդունելուց և գումարը ստանալուց երկու ամսվա ընթացքում:

գ) Փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից դիմողից ստացած գումարը վերադարձնելու վերաբերյալ.

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Տվյալ դեպքում Դիմողը ներկայացրել է ստացական, որն առերևույթ հավաստում է Վահագն Մանուկյանի կողմից 3000 ԱՄՆ դոլար ստանալու փաստը: Ընդ որում, ստացականում նշված է, որ այդ գումարը վճարվել է ծառայություն մատուցելու կապակցությամբ:

Դիմողի պնդմամբ այնքանով , որ Վահագն Մանուկյանը իրեն որևէ ծառայություն չի մատուցել, ուստի պահանջել է, որպեսզի իր կողմից վճարած ամբողջ գումարը փաստաբանի կողմից վերադարձվի իրեն:

Կարգապահական վարույթը նախապատրաստելիս նախապատրաստողիս կողմից հեռախոսով հրավիրվել են կողմերը: Հակոբ Հայրապետյանը իր դստեր հետ մեկ անգամ այցելել է ինձ, տվել է բանավոր բացատրություն , որի ընթացքում երկուստեք պնդել ու հաստատել են դիմումով ներկայացված հանգամանքները:

Նախապատրաստողից կողմից պահանջվել է գրավոր բացատրություն ներկայացնել ավելի մանրամասնելով հանգամանքները, սակայն թե Հայրապետյանները ու թե փաստաբան Վահագն Մանուկյանը ոչ մի բացատրություն չեն ներկայացրել: Այնուամենայնիվ Վահագն Մանուկյանի կողմից հեռախոսով հաստատել է իր կողմից Հայրապետյանին գումարը չվերադարձնելու հանգամանքը չնայած խոստում է տվել , որ ամեն միջոց ձեռնարկում է այդ գումարը ամբողջությամբ վերադարձնելու համար, հաստատել է նաև , որ ստացականը գրվել է իր կողմից , և այն , որ փաստաբանական ծառայություն մատուցելու մասին պայմանագիր իրականում ինքը Հայրապետյանի հետ չի կնքել:Վ.Մանուկյանի կողմից ոչ մի հիմնավոր այլ ապացույց չի ներկայացրել իր կողմից Հայրապետյանի դստերը իրավաբանական որևէ օգնություն ցույց տալու մասին:

Նման պայմաններում գտնում եմ , որ առկա են դիմումատու Հակոբ Հայրապետյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատին ուղղված դիմումով ներկայացված խախտումները, որոնք ըստ էության և հաստատում են ՀՀ փաստաբան Վահագն Մանուկյանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված 2.7.2 և 3.5.5 ենթակետերով նախատեսված կանոնների խախտմանը:

Այնքանով , որ կողմերը ոչ մի ապացույց չեն ներկայացրել, ուստի կարգապահական վարույթը վերադարձվում է այն փաստաթղթերով որոնք ի սկզբանե տրամադրվել էին նախապատրաստողիս>>:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 13.10.2016թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 26.01.2017թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդը հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Վահագն Մանուկյանը ստանձնել է Դիմողի դստեր շահերը ներկայացնելու պարտավորություն:
2. Փաստաբանը և Դիմողը չեն կնքել իրավաբանական ծառայություններ

մատուցելու մասին պայմանագիր:

3. Փաստաբանը Դիմողից ստացել է 3000 ԱՄՆ դոլար ծառայությունները մատուցելու համար:
4. Հետագայում փաստաբանը պարտավորվել է Դիմողին վերադարձնել վճարված գումարը:
5. Վերցված գումարը փաստաբանն այդպես էլ չի վերադարձրել:

Շարադրված փաստերը հիմնավորվել են հետևյալ ապացույցներով.

1. Դիմող Հակոբ Հայրապետյանի կողմից ՀՀ ՔՊ հասցեագրած երկու դիմումներով:
2. 13.07.2016թ. Դիմողի գրությանը կից ներկայացված ստացականի պատճենով այն մասին, որ փաստաբան Վահագն Մանուկյանը իրավաբանական ծառայություններ մատուցելու համար Դիմողից ստացել է 3000ԱՄՆ դոլար, և պարտավորվել այն վերադարձնել մինչև 2016թ. փետրվարի 15-ը:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված 25.01.2017թ. տեղեկանքի համաձայն փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ 2007-2017թթ. ժամանակահատվածում հարուցվել է 11 կարգապահական վարույթ, որոնցից 8-ի դեպքում Պալատի խորհրդի որոշմամբ կարգապահական վարույթները կարճվել են, երկուսի դեպքում նշանակվել են կարգապահական տույժեր՝ նկատողության ձևով (մեկը չմարված), իսկ վարույթներից մեկն անավարտ է:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահագն Մանուկյանը թույլ է տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 և 3.8.5 կետի պահանջի խախտում հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ ***Գործն ընդունելուց հետո, եթե*** *այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտության կա:*

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը հանգում է հետևության, որ փաստաբան Վահագն Մանուկյանը գործն ընդունել է վճարովի հիմունքներով, ծառայություններ մատուցելու դիմաց

ստացել է 3000 ԱՄՆ դոլար, սակայն համապատասխան պայմանագիր չի կնքել: Ավելին գործին կցված ստացականի պատճենը վկայում է այն մասին, որ փաստաբանն ինքն էլ գիտակցել է, որ Դիմողից ստացված գումարը ենթակա է վերադարձման, սակայն այդպես էլ նշված գումարը չի վերադարձրել:

Միաժամանակ Պալատի խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթում առկա նյութերը հնարավորություն չեն տալիս հանգել հետևության, թե արդյոք փաստաբանը կատարել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 կետերով նախատեսված խախտումներ, թե ոչ, ուստի այս մասով հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Փաստաբան Վահագն Մանուկյանի նկատմամբ նշանակվելիք կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Պալատի խորհուրդը հաշվի է առնում թույլ տրված խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ փաստաբանն ունի չմարված տույժ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 և 3.5.5 կետերով հարուցված կարգապահական վարույթը կարճել:***
2. ***Փաստաբան Վահագն Մանուկյանին (արտոնագիր թիվ 749) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.3 և 3.8.5 կետերի պահանջների խախտման համար:***
3. ***Փաստաբան Վահագն Մանուկյանի (արտոնագիր թիվ 749) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:***
4. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վահագն Մանուկյանին և Դիմողին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյան